

Տեղեկանք

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 287. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը զանգատարկելու կարգը

Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման բողոքարկման կարգը

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կալազրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով՝ կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով, բազառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:
2. Սույն օրենսգրքի 10-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց հետո:
3. Որոշումը վարչական կարգով բողոքարկվում է վարչական ակտն ընդունած վարչական մարմին, վարչական մարմնի վերադաս վարչական մարմին կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավասու վարչական մարմնին:
Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնվել է էլեկտրոնային փոստով, ապա այդ որոշումը կարող է զանգատարկվել նաև նույն էլեկտրոնային փոստով զանգատն ստանալու մասին էլեկտրոնային ծանուցմամբ:

Deleted: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործով որոշումը կարող է զանգատարկվել՝
1) Վարչական հանձնաժողովի, անչափահասների գործերի հանձնաժողովի որոշումը՝ պատգամավորների համապատասխան խորհրդի գործադիր կոմիտե կամ շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարան, որի որոշումը վերջնական է:
2) պատգամավորների ավանային, գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի որոշումը՝ պատգամավորների շրջանային, քաղաքային, քաղաքի շրջանային խորհրդի գործադիր կոմիտե կամ շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարան, որի որոշումը վերջնական է:
3) այլ մարմնի (պաշտոնատար անձի) որոշումը տուգանքի ձևով վարչական տույժ նշանակելու մասին՝ վերադաս մարմնին (վերադաս պաշտոնատար անձին), կամ շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարան, որի որոշումը վերջնական է, այլ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը՝ վերադաս մարմնին (վերադաս պաշտոնատար անձին), որից հետո զանգատ կարող է տրվել շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարան, որի որոշումը վերջնական է:
4) Միաժամանակ հիմնական և լրացուցիչ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կարող է զանգատարկվել որոշումը զանգատարկող անձի ընտրությամբ հիմնական կամ լրացուցիչ տույժի համար սահմանված կարգով:
5) ոստիկանության (պաշտոնատար անձի) որոշումը նախազգուշացման ձևով վարչական տույժ նշանակելու մասին, որը կատարվել է իրավախախտման տեղում, առանց արձանագրություն կազմելու՝ վերադաս մարմնին (վերադաս պաշտոնատար անձին):
6) գինվորական ավտոմոբիլային տեսչության պաշտոնատար անձի որոշումը նախազգուշացման ձևով ... [1]